ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-8-4-Ա

ք. Երևան 20.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 30-ին «Լավաշ քոմ» ՍՊԸ-ի (Երևան, Գարեգին Նժդեհի 56/2) ներկայացուցիչ Հայկ Սարգսյանի կողմից ներկայացված «BASTURMA COM» (No20170441) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար, և որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ բացառապես բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող «BASTURMA« և «COM» գրառումներից, որոնցից առաջինը նկարագրական բնույթի նիշ է, չնայած լատինատառ գրված լինելուն ունի նույն հնչողությունը, ինչ «ԲԱՍՏՈՒՐՄԱ» բառը, որը հանդիսանում է ապրանքի տեսակ, այն նախուտեստ է, որը մատուցվում է գրեթե բոլոր սննդամթերքով ապահովող հաստատություններում և լայն կիրառություն ունի

հանրային սննդի բնագավառում, իսկ երկրորդը վերին մակարդակի ընդհանուր դոմենն է կոմերցիոն կազմակերպությունների համար: Ինչ վերաբերում է 30-րդ դասի ապրանքներին՝ հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ նրանում առկա «BASTURMA» գրառումը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում, և չի կարող օգտագործվել «սուրճ», «թեյ» և այլ ապրանքների համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ բացառապես բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող «BASTURMA« և «COM» գրառումներից, որոնցից առաջինը նկարագրական բնույթի նիշ է, չնայած լատինատառ գրված լինելուն ունի նույն հնչողությունը, ինչ «ԲԱՍՏՈՒՐՄԱ» բառը, որը հանդիսանում է ապրանքի տեսակ, այն նախուտեստ է, որը մատուցվում է գրեթե բոլոր սննդամթերքով ապահովող հաստատություններում և լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում, իսկ երկրորդը վերին մակարդակի ընդհանուր դոմենն է կոմերցիոն կազմակերպությունների համար: Ինչ վերաբերում է 30-րդ դասի ապրանքներին՝ հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ նրանում առկա «BASTURMA» գրառումը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում, և չի կարող օգտագործվել «սուրճ», «թեյ» և այլ ապրանքների համար:

Բողոքարկողը չառարկեց կոլեգիայի ներկայացրած նախնական կարծիքը:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումը իրավաչափ է և բաժինը որոշումը կայացրել է ելնելով օրենքի դրույթներից:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Լավաշ քոմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հայկ Սարգսյանի կողմից ներկայացված «BASTURMA COM» (No20170441) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը և փոր ձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ